ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ֆոտոն ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/83 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Գալարավարագույրը բաղկացած է 3 մասից. 1. Քիվին՝ ալյումինե գլան է, որի վրա ամրացվում են կտորը և կառավարող մեխանիզմը: Այն երկաթյա ամրակներով ամրացվում է պատին կամ առաստաղին: 2. Պտտվող մեխանիզմն աշխատում է շղթայի միջոցով՝ բարձրացնելով կամ իջեցնելով կտորը: 3. Կտորն իրենից ներկայացնում է արևապաշտպան, լուսաթափանց(առնվազն 70%), փոշեվանիչ գործվածք պոլիեսթերի և բնական մանրաթելերի համախառն բաղադրությամբ, այն կանխարգելում է ջերմային ճառագայթների ներթափանցումը: Կտորն ներկված և ներծծված է լինում հատուկ բաղադրության նյութերով՝ արևից և քայքայվելուց պաշտպանվելու համար: Կտորի մեկ մետր քառակուսու զանգվածը կազմում է ամենաքիչը 200գրամ: Կտորի հաստությունը առնվազն 0,3մմ է: Գալարավարագույրի կտորը ամրացվում է ալյումինե խողովակին և մեխանիզմի շղթայի միջոցով պտտվելով իջնում կամ բարձրանում՝ հավաքվելով ալյումինե խողովակի վրա: Կտորի ստորին հատվածում ամրացված է ալյումինե ծանրոց, որն ապահովում է կտորի հավասարաչափ ուղղաձգությունը: Աշխատում է դեպի վերև կամ ներքև՝ կարգավորելով լույսի հոսքը դեպի ներս: Գույնը, ամրացնելու ձևը պետք է համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Չափաբաժնում նշված ապրանքի չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±10%: Երաշխիքային ժամկետը՝365 օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Фотон в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/83 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	